Բիզնեսը Գիտելիքներ ուսումնա-արտադրանկան արհեստանոցի ղեկավարի մասնագիտական որակավորման բարձրացման համար

Սուրեն Պարսյան

Նկարագրություն

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ մեր երկրում ավելի ու ավելի շատ մարդիկ են ընդգրկվում բիզնեսի մեջ: Դա մի բնագավառ է, որը ենթադրում է հատուկ կենսակերպ, երբ մարդը պատրաստ է ինքնուրույն որոշումներ կայացնելու, նաև ռիսկի դիմելու: Մեր կրթական համակարգը (և՛ հանրակրթական, և՛ միջին մասնագիտական, և՛ բուհական) պատրաստում է աշխատողներ, այսինքն՝ փոխանցվող գիտելիքները, կարողություններն ու հմտությունները որոշակի աշխատանք կամ ծառայություն մատուցելուն են ուղղված: Շատերը ապրում են աշխատավարձից աշխատավարձը, ինչը, իհարկե, կախվածության մեջ է պահում: Այս սեմինարները կօգնեն ստանալ արժեքավոր բիզնես գիտելիքներ, և կարող ենք իրավիճակը փոխել՝ «Դուք աշխատում եք փողի համար, երբ Փողը կարող է աշխատել Ձեզ համար»: Այս գիտելիքները կօգնեն դառնալու ԱԶԱՏ:

Դասընթացի խնդիրներն ու նպատակները

- Սեմինարները սկսվում է հատուկ մասնագիտական թեսթի միջոցով, որի արդյունքում կպարզվի , թե որքանով են մասնակիցները ունակ բիզնես կազմակերպել , այնուհետև, կկատարվի թեսթի արդյունքների բանավոր քննարկում:
- Մասնակիցներին ծանոթացնել «բիզնես» գաղափարի հետ, տալ տարբեր մեկնաբանություններ, ձևավորել բիզնես մտածելակերպ:
- Դրամական միջոցների ճիշտ կառավարում. ուսումնական արհեստանոցի դրամական ծախսերը. ամսական հաշվետվություն (նյութերի և ծառայությունների սպառում, աշխատավարձ)
- Դրամական հոսքերի կարգավորում. զարգացման համար ուսումնական արհեստանոցին անհրաժեշտ դրամական միջոցների նախահաշիվ
- Բիզնես պլանի կազմում
- Ցանցային մարքետինգի գաղափարը. կրթահամալիրի Բիզնես կենտրոն
- Դասընթացի արդյունքում մասնակիցները կստանան կիրառական գիտելիքներ և հմտություններ ժամանակակից շուկայական հարաբերություններում սեփական բիզնես սկսելու համար:

Ուսումնական միջավայր և անհրաժեշտ գործիքներ

Սեմինարները կարող է սկսվել ինչպես նախատեսված համապատասխան մասնագիտացված լսարանում, այնպես էլ որևէ ձեռնարկությունում: Ուսումնական

կաբինետի պարագայում անհրաժեշտ է համապատասխան գրականություն (տպագիր կամ էլեկտրոնային), համակարգիչ, որը միացված է ինտերնետին, և էլեկտրոնային գրատախտակ: Անհրաժեշտության դեպքում կկատարվի ուսումնահետազոտական գիտարշավներ: